| | |
|---|---|
| ՊԱՇՏՈՆ | Մանրածախ խնդրահարույց ակտիվների վերադարձման բաժնի մասնագետ |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | Լրիվ դրույք |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ք. Երևան, ՀՀ |
| ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ | Հնարավորինս շուտ |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | 13/10/23 |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ | Անորոշ |

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Մանրածախ խնդրահարույց ակտիվների վերադարձման բաժնի մասնագետի ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրականացնել ներքին իրավական ակտերով սահմանված Հարդ փուլում գտնվող մանրածախ խնդրահարույց վարկերի ուսումնասիրություն և վերլուծություն, պլանավորում է խնդրահարույց ակտիվների վերադարձման ուղղությամբ հետագա աշխատանքները,
- Մանրածախ խնդրահարույց ակտիվների հավաքագրման նպատակով կատարել զանգեր, կազմակերպել հանդիպումներ Բանկի տարածքում,
- Ներկայացնել առաջարկություններ մանրածախ խնդրահարույց ակտիվների հետագա հավաքագրման/բռնագանձման գործընթացի վերաբերյալ,
- Մանրածախ խնդրահարույց վարկառուների հետ բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների և ստացված տեղեկատվության մուտքագրում Բանկի համապատասխան բազա,
- Ներկայացնել հաշվետվություններ մանրածախ խնդրահարույց ակտիվների հետ կատարված աշխատանքի և խնդրահարույց գործերի կարգավիճակների վերաբերյալ:

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային ոլորտում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի իմացություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Հաղորդակցման և թիմում աշխատելու հմտություններ

- Խնդիրների արագ ու արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին, անհրաժեշտ է լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելությունն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: